Լավութիւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա…

ԲԱՐԵԳՈՐԾ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

BAREGORTS մարտ, 2018, 1 (38), БАРЕГОРЦ

ԴՐԱՄԱՀԱՎԱՔ – 2017

Անցած տարեվերջին՝ նոեյեմբերի 17-ին կայացավ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի»՝ հերթական դրամահավաքը: Արդեն ավանդական դարձած ամենամյա այս տոնախմբությունը յուրօրինակ ազգային ուխտի օր է լոսանջելեսաբնակ մեր հայրենակիցների համար, ովքեր սեռից ու տարիքից անկախ՝ յուրօրինակ մրցության մեջ են. Հայաստանն Արցախին կապող կարևորագույն կամուրջը՝ Լաչինի միջանցքը, որ ներկայիս Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանն է՝ Բերձոր կենտրոնով, պիտի ամրանա նյութապես ու բարոյապես, պիտի կայունանա հայ ընտանիքներով, որ հուսալի դառնա Արցախ-Հայաստան կապը: Հիմնադրամն այդ նպատակով իրագործում է մի շարք բարեգործական ծրագրեր, որոնք անհրաժեշտ են Քաշաթաղի շրջանի մեր անապահով հայրենակիցների կենսապայմանների բարելավման համար:

Եվ ոչ միայն այդ:

Կարևոր են նաև «ԽԵԱ Կով», «Ծառատունկ», «Գիրք» և մյուս ծրագրերը, որոնցով այսօր ապահովվում են արցախաբնակ մարդկանց բարեկեցությունը, մշակութային պահանջմունքները, տարածքի հողամշակությունն ու բնության բարեկարգումը և այլն:

Ստորև ներկայացնում ենք կայացած դրամահավաքի արդյունքները, որոնցով ամերիկացի մեր բարեգործ հայրենակիցներն իրենց մասնակցությունն են բերում մեր երկրի վերաշինության հայրենանվեր գործին.

Gurgen Meliqyan Multichildren Famili of Qashatagh
November 19, 2017

LAST NAME	FIRST NAME	CHECK #		CASH
		Check #	Amount	
Aboolian	Karine & Saro	1354	$ 1,000.00	
Aleksandryan	Irina			$ 220.00
Allied West Paper Corp		73849	$ 5,000.00	
American Heating Technology		3900	$ 750.00	$ 120.00
Amirian	Robert	6313	$ 500.00	
Amirkhanian	Rita Vova			$ 200.00

Anahit Fund		**1065**	**$ 1,500.00**	
Andrian	**Nvard**			**$ 100.00**
Arezouyan	**Hratch**	1120	$ 100.00	
Armenia Artsakh Fund Inc		1324	**$ 657.00**	
Arnold				**$ 125.00**
Arzoumanian	**Tagoui**	1257	$ 200.00	
Asatryan	**Vartan**			**$ 100.00**
Asheghy	**Ruben**			**$ 200.00**
Avagyan	**Sona**			**$ 200.00**
Avanessian	**Nora and Harmik**			**$ 100.00**
Badalian	**Armen**			**$ 150.00**
Badalyan	**Sarkis**			**$ 350.00**
Badalyan	**Suren**			**$ 200.00**
Baghdanian	**Hamo & Medik**	1248	$ 200.00	
Baghdanian	**Ariknaz and Avydis**			**$ 200.00**
Baghdasarian Grigorian	**Asmik Garegin**	2928	$ 200.00	
Baghdassarian (Information Integration Group Inc)	**Alec & Alenoosh**	2602	**$ 750.00**	
Information Integration Group		2660	**$ 1,800.00**	
Balian	**Harout Raffi**	500	$ 750.00	
Balian	**Misak**			**$ 150.00**
Bandari	**Alvard & Vahik**	4782	**$ 700.00**	
Baronikian	**Felix & Lilit**	2594/2595	$ 150.00	
Bashmakian	**Hagop & Alissa**	406	$ 150.00	**$ 1,000.00**
Central Diagnostic Imaging Network,LLC		**6100**	**$ 750.00**	
Charchian	**Benjamin**	**52966**	**$ 1,000.00**	
Charchian Medical corporation	**David**	5057	$ 2,000.00	
Charchian	**Arthur**			**$ 40.00**
Cohen (Atelier De Paris)	**Rose Mary**	**10801**	**$ 150.00**	
Der Sahakian	**Suzanne**	**2941**	**$ 500.00**	
Derderian	**Vardui and Viken**	**1991**	**$ 75.00**	
Deurdulian TTEE	**Albert**	2942	**$ 1,000.00**	
Eskandar	**Alenoosh**	6553	$ 200.00	

First Look Optic		**6278**	**$ 1,500.00**	
For a better life	**Mesropian Seroj Medik**	176	$ 1,000.00	
For a better life		177	$ 750.00	
Fundukian	**Vardan**	1012	**$ 2,000.00**	
G.Z. anonymous				**$ 100.00**
Galstanian	**Rafik**	1793	$ 300.00	
Galstanyan	**Galust and Arthur**			**$ 300.00**
Galustyan				**$ 70.00**
Ghapgharan	**Swetlana & Karine**	5670	$ 50.00	
Ghassemian	**Hovik**			**$ 100.00**
Ghevendian trust		305	$ 5,000.00	
Ghookasian	**Derik and Adrineh**	**2038**	**$ 75.00**	
Glendale West Drug Co INC		9146	$500	
Golden plaza		3376	$ 500.00	
Gourjian	**Roubin**	4307	**$ 200.00**	
Gregory	**Victor**			**$ 500.00**
Grigorian	**Greta**	**222**	**$ 100.00**	
Guledjian	**Hago and Anahit**	8467	**$ 300.00**	
Halabi	**Gilbert and Anahit**			**$ 20.00**
Harutunyan	**Araik**			**$ 60.00**
Havaudjian				**$ 45.00**
Haytayan	**Leon/Shant**			**$ 1,335.00**
Hayrapetian	**Armen & Elenora**	941	$ 1,000.00	**$ 135.00**
Hayrapetian Dental Corporation	**Hayrapetian Hayk & Tereza**	388278	**$ 750.00**	
Hrazdan Majidiyeh		**1148**	**$ 1,500.00**	Cow Project
In the arms of grace hospice, inc		**1541**	**$ 200.00**	
Janoian and Kristorian	**Noobar and Sonia**	**5367**	**$ 1,000.00**	
Kalognomos	**Medea & Alexander**	116	$ 500.00	
Kanian	**Nick and Mary**	4364	**$ 1,000.00**	**$ 20.00**
Kanian	**Nick and Mary**	4367	$ 1,500.00	
Karapetyan	**Ernest**			**$ 80.00**
Kazanjian	**Vahe & Seda**	7937	$ 300.00	
Keshishian	**Oshin**			**$ 50.00**
Khachaturyan	**Aram**			**$ 100.00**

Khachatryan Pilosyan	**Tigran Ani**	**193**	**$ 950.00**	
Khanlaryan	**Albert**	**9887**	**$ 300.00**	**$ 350.00**
Khurshadyan	**Garik**			**$ 100.00**
Kiraj & Muradyan dental corp		**3325**	**$ 700.00**	
Kivranyan	**Tigran**			**$ 500.00**
Kojaian	**Minas & Nazelie**	2482	$ 200.00	
Krkhyan	**Akop**			**$ 200.00**
Kusherian	**Vardui**			**$ 300.00**
Kyureghian	**Varujh and Emma**			**$ 2,000.00**
Kyureghian	**Varujh & Emma**			**$ 985.00**
Little Mermaid Smokehouse				**$ 830.00**
Manukyan	**Lida**	**183**	**$ 100.00**	
Manukyan	**Lida**			**$ 30.00**
Manukyan	**Tatev**			**$ 100.00**
Marashlian	**Levon**	**929/930**	$ 420.00	
Mardirossian	**Timmy & Sedik**	145	$ 1,000.00	
Martin	**Zareh**			**$ 200.00**
Martin	**Rosie**			**$ 300.00**
Mesropian	**Seroj**			**$ 3,000.00**
Mirzoukhian	**Gevik**			**$ 100.00**
Mokhtarian	**Ohannes & Vanoosh**	1171/1172	$ 1,550.00	
Mulroy	**Anna**			**$ 100.00**
MTS management	**Mardirossian Timmy & Sedik**	2624	$ 5,000.00	
Najarian	**Carolann**	**1526/ 332**	**$ 10,000.00**	
Najarian	**Vartkes and Mary**	**855**	**$ 500.00**	
Nazari	**Ashot**			**$ 150.00**
Nersissian	**Edward and Karine**			**$ 300.00**
Ocalian	**Frida**			**$ 150.00**
papayans	**Sheila**	2273	$ 1,000.00	
Papouyan	**Ruben**			**$ 80.00**
Petrossian	**Grigor**	1015	$ 250.00	**$ 45.00**
Pilossyan Medical Center, Inc.		8280	$ 1,500.00	

Pirjanian (A.I.F.)	**Souren**	**93**	**$ 500.00**	
Rafaelian, Koshkarian	**Natalie Vahan**	116	$ 750.00	
S & A Mechanical		**6248**	**$ 305.00**	
S & A Mechanical		**6247**	**$ 1,000.00**	
Samuelian	**David**			**$ 105.00**
Sardarian	**Avag**			**$ 300.00**
Setian	**Karen**			**$ 135.00**
Shahbazian	**Karnik**	**2186**	**$ 500.00**	
Shapandarian	Norik			**$ 150.00**
Simonian	Hrand, Armen, Raffie	**471**	**$ 1,000.00**	
SonaVan				**$ 1,000.00**
Tchobanian Khatchadourian	**Aram and Aida**	**3318**	**$ 1,000.00**	
Ter Petrossyan	**Christine**			**$ 50.00**
Tereza				**$ 45.00**
The Vahagn Setian Charitable Found.		**1304**	**$ 500.00**	
The Vahagn Setian Charitable Found.		**1307**	**$ 500.00**	
Torossian	**Vatkez**	1926	**$ 700.00**	
Tumanyan	**Nerses**	403	$ 700.00	
Vartanian	**Olga & Sooren**	7469	$ 100.00	
Vartanian	**Talin**			**$ 700.00**
Vartanian	Sushan			**$ 200.00**
Vartanian	Ara			**$ 135.00**
Ararat Foundation	**Vartanian Frederick**	**3,015**	**$ 1,021.00**	
VJ & Associates		**2059**	**$ 750.00**	**$ 100.00**
Voskanyan	**Gayane**	106	$ 225.00	
Yegiyants	**Artoush & Hasmik**	758	$ 250.00	**$ 165.00**
Yegiyants	**George & Matilda**			**$ 270.00**
Yegiyants	**Suren And Anna**	**1153**	$ 250.00	**$ 20.00**
Yegiyants M.D. Inc.	Sara	**1273**	**$ 300.00**	
Zakian	Raffik and Astkhik Star	**928**	**$ 750.00**	
Zargaryan	**Vigen**	**7491**	$ 750.00	**$ 140.00**
TOTAL			**$ 74,928.00**	**$ 19,705.00**

ՀԱՅՐԵՆԱՆՎԻՐՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՐԴԱՐՅԱ ԱՎԱՆԴՈՒՅԹ

Հայ ժողովուրդը իր գոյության ողջ ընթացքում դատապարտված է եղել գոյամարտերով հաստատելու իր ապրելու, հարատևելու իրավունքը և իր ստեղծած մշակութային արժեքները փոխանցելու հաջորդ սերունդներին: Հատկանշական է, որ հերոսամարտերի ճակատագրական պահերին նա միշտ ապավինել է նախնիներ պատգամներին, որոնք լիցք ու զորություն են հաղորդել նրա արարչագործ ոգուն, առնական բազկին ու արդար զարկին: «Նա, ով չի նորոգում և բարձրացնում նախնիների առաքելությունը, ամոթ և նախատինք է իր պապերի համար» (, Սիրաք, 20:28): Աստվածաշնչյան պատգամները փոխանցվել: են սերնդեսերունդ, հասել Խաչատուր Աբովյան ու մեր օրերը.

Վա՜յ էն ազգին, որ աշխարհումն անտեր ա,
Վա՜յ էն երկրին, որ թշնամու գերի ա,
Վա՜յ էն խալխին՝ որ իր կյանքն ու աշխարհքը
Չի պահպանիլ ու հարամու ձեռ կտա:

Երեք տասնամյակ առաջ սկսված Արցախյան շարժումը հույսեր ներշնչեց ողջ հայությանը, որ Հայաստանի անկախացումն ու Արցախի ազատագրումը անիրականանալի երազանք չեն: Հանուն այս սրբազան նպատակների միավորվեց ողջ հայությունը, դարձավ միասնական բռունցք ու մաքառեց արդարության հաղթանակի ու բաղձալի ազատության համար, և 1988-ի աղետալի երկրաշարժից հետո անգամ հաղթանակը դարձավ անկասելի: Յուրաքանչյուր հայ իր ներդրումն ունեցավ թուրք-ազերիների կողմից մեզ պարտադրված պատերազմում հաղթանակի և տխուր հետևանքների վերացման ու մեր երկրի վերաշինության մեջ: Ես էլ՝ ժողովրդական ասեղնագործ-վարպետ, ջանացի իմ հնարավորություններով օգտակար լինել իմ ժողովրդին: Աղետի շրջաններում և Արցախում ձեռարվեստի ուսուցում կազմակերպեցի հաշմանդամների համար: Դա իմ մարդկային ու բարոյական պարտքն էր, որ կատարում էի անկեղծ նվիրումով: Ներքին մեծ բավարարություն էր ինձ համար ֆիզիկական սահմանափակումների ենթարկված խեղանդամ հայրենակիցներիս մեջ սեփական ուժերին ապավինելու հավատ արթնացնել, որ իրենց մարդ զգան և ընտանիքին ու հարազատներին, ազգին ու հայրենիքին պիտանի լինելու գիտակցություն ունենան:

Իհարկե, ես միայնակ հաջողության չէի հասնի: Իմանալով, որ պրոֆ Գ. Մելիքյանը բարեգործական կարևոր ծրագրեր է իրականացնում, դիմեցի նրան, որ աջակցի ինձ Հայաստանի սահմանամերձ համայնքներում և Արցախում ձեռարվեստի դասընթացներ կազմակերպելու և վարելու խնդրում: Ձեռարվեստի վարպետության դասընթացներին մասնակցում էին զոհված ամուսին ունեցող բազմազավակ մայրեր, սոցիալապես խոցելի խմբերի ընտանիքների կանայք ու երեխաներ: Գնալով մեծացավ դասընթացներին մասնակցող հայուհիների թիվը, հիմնվեց ձեռարվեստի դպրոց, որ ուսուցման սահմանները տարածեց Քաշաթաղից մինչև Հայաստանի ու Արցախի այլ սահմանամերձ շրջաններ:

Արդեն քառորդ դար է՝ գործում է ձեռարվեստի դպրոցը, որը տվել է հրաշալի արդյունքներ: Նրա սաների մեծ ու փոքր աշխատանքները՝ որպես ձեռարվեստի ազգային ինքնատիպ նմուշներ, վաղուց դուրս են եկել Հայաստանի ու Արցախի սահմաններից և ցուցադրվում են աշխարհի տարբեր երկրների ցուցահանդեսներում (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Հունաստան, Չինաստան և այլուր):

Ձեռարվեստի գաղտնիքները մայրերից փոխանցվում է դեռատի դուստրերին՝ 9-17 տարեկան աղջիկներին, ովքեր, հետագայում ամուսնանալով, այդ հարստությունը տեղափոխում են ամուսնու ընտանիք: Այսպես են ասեղնագործությունն ու գորգագործությունը, առհասարակ ձեռարվեստը դարեդար տարածվել մեր ժողովրդի մեջ՝ որպես նրա ստեղծարար ոգու և ազգային ինքնության դրսևորում: Այն ուրույն զենք է ամենչ իրենը համարող մեր կողպտիչ ու բռնազավթիչ, գող հարևանների դեմ գաղափարական ու մշակութաբանական չմարող պատերազմում:

Սա մեր վերջին հանդիպումը չէ. Հետագայում «Բարեգործի» ընթերցողին կներկայացնենք ձեռարվեստի դպրոցի սաների լավագույն աշխատանքների նմուշներ:

ՄԱՐԳՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ժողովրդական վարպետ,
Հովհ. Ծարամբեյանի անվան ժողովրդական
ստեղծագործության կենտրոնի գիտաշխատող

ԲԱՌԵՐՈՎ ՈՉ ՄԻ ԿԵՐՊ ԼԻԱՐԺԵՔ ՉԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ դպրոցի ավարտական դասարանում էի, դեռևս հեռավոր երազանք էր թվում Հայոց Մայր բուհ ու մանավանդ իմ սիրած դեղագիտության ֆակուլտետն ընդունվելը: Բավական դժվար ու աշխատար ճանապարհ անցա, և անհավատալի արագությամբ սթրեսային քննությունները տեղի տվեցին նվաճված ուսանողական իրավունքի առաջ: Իրականացավ երազանքս, ուսման ծարավն ու անհկամքը նպատակասլացորեն ինձ առաջ էին մղում: Հաճելի բերկրանքի մեջ միակ տխրեցնողն ու ընկճողն այն էր, որ հայտնվել էի վճարովի համակարգում: Բայց հասկանալով, թե ի՞նչ պատիվ է վիճակված ինձ և գիտակցելով համալսարանի ուսանողի պարտականությունները՝ համառ աշխատանքով արժանապատիվ տքնությամբ արդեն առաջին կուրսի երկրորդ կիսամյակում կարողացա գլխավորել ան-

վճար սովորողների ցուցակը։ Սկսվեց իրարահաջորդ հաջողությունների շրջանը։ Բակալավրիատի 4-րդ կուրսում, ինձ համար էլ անսպասելի, դարձա Նազելի Զարչյանի անվան կրթաթոշակակիր։ Սկզբում նույնիսկ չգիտեի՝ ո՛ւմ անունով է սահմանված, ո՛վ է փոխանցում այդ կրթաթոշակը, որ մեկ տարի ստանում էի հաճելիորեն, և բնականաբար պիտի հետաքրքրվեի երախտագիտությունս հայտնելու համար։ Ցավոք, համացանցում որևէ տեղեկություն չտա։ Շարունակվող որոնումներս ինձ տարան ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ՝ արգեն նախկին դեկան, պրոֆ. Գուրգեն Մելիքյանի մոտ, ով բանասեր – իրանագետ, հանրահայտ ազգային-հասարակական գործիչ, պատերազմական ժամանակներում Արցախի պաշտպանության բանակի հրամանատարի տեղակալը լինելով՝ հիմնադրման օրից «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրենն է։

Ահա թե ո՛ւմ պետք է շնորհակալություն հայտնեմ «Նազելի Զարչյան» անվանական կրթաթոշակը ստանալու համար։ Խնդիրը ոչ միայն նյութական-ֆինանսական ու բարոյական քաջալերանքն են, այլև հպարտության այն վեհ զգացումը, որ ունենում ես հայ մարդու և մտավորականի այս բացառիկ տեսակին՝ Գուրգեն Մելիքյանին ճանաչելով ու նրա հետ շփվելով։ Հենց նրանից իմացա լուսահոգի Նազելի Զարչյան անունով մեծ հայուհու, բժշկուհու, բարեգործի, ամերիկահայերի համայնքային կյանքի անխոնջ կազմակերպչի, պատերազմից տուժած Հայաստանի և Արցախի համար նրա բարեգործությունների մասին։ Առավել հպարտացա, որ հենց նրա անվան կրթաթոշակն եմ ստանում որպես նյութական ու բարոյական մեծ քաջալերություն։ Հպարտ եմ, որ եղել են ու կան հայրենիքին ու հայության նոր սերունդներին նվիրված այս տեսակ օրինակելի հայեր, որոնց հայտնում եմ անսահման երախտագիտությունս։

ՄԱՐԻԱՄ ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի
մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի

* * *

Մեր օրերում նպատակասլաց երիտասարդը ամեն քայլափոխի հանդիպում է դժվարությունների, որոնք անձնական օրինայով կարող եմ վկայել, ինքնուրույնաբար չի կարող հաղթահարել առանց վեհասիրտ ու բարեհոգի մարդկանց աջակցության:

Ես՝ Լուսինե Արթուրի Ճաղարյանս, որ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողուհի եմ, ուսումնառության մեջ դրսևորել եմ բարձր առաջադիմություն և ակտիվորեն ներգրավված եմ հասարակական աշխատանքներում, այս առավելությունների շնորհիվ արժանացել եմ «Ստեփան Ալաջաջյան» կրթաթոշակին: Անձնական օրինակով հաստատում եմ, որ այդպիսի բարձր պատվի արժանանալը ուսանողուհու համար թե՛ նյութական, թե՛ բարոյական մեծ հենարան է :

Ինչ էր ինձ հայտնի Ստեփան Ալաջաջյան ականավոր գրողի, թարգմանչի, խմբագրական-հրատարակչական գործի հմուտ կազմակերպչի և հանրային գործչի մասին:

Ընդհանուր տեղեկություններ գիտեի միայն ու բնավ չէի պատկերացնում, որ վերջին շրջանի մեր պատմության ողբերգական ու հերոսական էջերը գեղարվեստականացրած «Եղեգները չընկնարիվեցին» վեպի տաղանդավոր հեղինակը, Շեքսպիրի, Ժան Պոլ Սարտրի, Վիլյամ Սարոյանի, Հերբերտ Ուելսի նշանավոր երկերի՝ անմատչելի ու անհասանելի թվացող թարգմանիչը հանկարծ կդառնա այսքան ընտանի, մտերիմ ու հոգեհարազատ և այսքան հպարտություն ներշնչող: Չկա ավելի հաճելի զգացում, քան այն, որ գիտակցում ես գնահատված լինելդ:

Հենց այդ զգացումներով էլ շնորհակալություն եմ հայտնում կրթաթոշակը սահմանած Ալաջաջյան ընտանիքին և «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի հոգաբարձության խորհրդին» ինձ այս պատվին արժանացնելու համար:

ԼՈՒՍԻՆԵ ՃԱՂԱՐՅԱՆ

Հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողուհի
ուսանողուհի

Հայ օգնության միության Արցախի միավոր Շուշիի մանկապարտեզի

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐԸ

Շուշիի «Սոսե» մանկապարտեզի ողջ աշխատակազմը իր խորին երախտագիտությունն է հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին՝ մանկապարտեզի երեխաներին կոշիկ տրամադրելու համար:

Տնօրեն՝ ստորագրություն (Ա. Պ. Մինասյան)

19. 12. 2017

* * *

Հոգաբարձության խորհուրդը շնորհակալություն է հայտնում հիմնադրամի հնագույն բարեկամ

ՍԱՄՎԵԼ ՍԱՆԱՄՅԱՆԻՆ՝

հիմնադրամին 570 լիտր վառելանյութ տրամադրելու համար: Այն կօգտագործվի Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում և նրա շրջակայքում ԵՊՀ ուսանողների միջոցով առաջիկայում «Արցախյան շարժման 30-ամյակի պուրակ» հիմնադրելու և ծառատունկ կազմակերպելու համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհուրդը կրկին հայտարարում է մեծ մարդասեր, Լոս Անջելեսի հայ գաղութի համայնքային կյանքի կազմակերպիչներից մեկի՝ «Անահիտ» հիմնադրամի բազմամյա նախագահ, լուսահոգի

Ն Ա Զ Ե Լ Ի

Չ Ա Ր Չ Յ Ա Ն Ի

անվան կրթաթոշակ առաջավոր ուսանողների համար: Մրցույթին կարող են մասնակցել Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի ուսանող - ուսանողուհիները, ովքեր ունեն ուսման բարձր առաջադիմություն և օրինակելի վարք:

Մրցույթին մասնակցել ցանկացողները հիմնադրամի հոգաբարձության խորհրդին դիմում են ներկայացնում նրա գործադիր տնօրեն պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի անունով:

Դիմումները փաստաթղթերի հետ միասին մինչև սեպտեմբերի 20-ը ներկայացնել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանատ:

** * **

Հոգաբարձությունը կրկին մրցույթ է հայտարարում նաև ականավոր գրող, թարգմանիչ և հանրային գործիչ, «չխոնարհվող եղեգ», երջանկահիշատակ

Ս Տ Ե Փ Ա Ն

Ա Լ Ա Ջ Ա Ջ Յ Ա Ն Ի

անվան կրթաթոշակի համար:

Մրցույթին կարող են մասնակցել Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլ

* * *

Ելնելով ստեղծված սոցիալական իրավիճակից՝ հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը որոշում է՝

Միանվագ նյութական օգնություն տրամադրել հայրենական գիտության զարգացման մեջ առանձնակի ավանդ ներդրած մտավորականների ընտանիքներին:

* * *

Շարունակվում է ԽԵԱ «Կով» ծրագիրը:

Հոգաբարձության խորհրդի որոշմամբ՝ կովեր տրվում են Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանում բնակվող բազմազավակ ընտանիքներին՝ ըստ երեխաների քանակի.

- 4 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է մեկ կով.
- 6 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է երկրորդ կովը.
- 7 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին տրվում է երրորդ կով:

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՎԱԳՅԱՆ Ա, բ. գ. դ., պրոֆեսոր

ՄԵԼԻՔՅԱՆ Գ, բ. գ. թ., պրոֆեսոր

ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ, պ. գ. թ., պրոֆեսոր

Նյութերը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի: :

Տպաքանակը՝ 99:

Թերթը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն՝

Երևան 0025, Արովյան 52 Ա, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:

Հեռ.՝ 060 710 629, 055 -52- 29-36: